ժամանակ միայն հասկանում է, թէ նա մեռաւ, երբ նկատում է, որ էլ ձայն չէ հանում: «Դա փչացաւ, ասում է կնքահօրը, թէ կայ, գնացէք մի ուրիշը բերէք, որ մկրտեմ»:

Տէրտէրը մեզ երկար չպահեց՝ երեւում էր, նա ինքը նոյնպէս շտապում էր, որ մենք շուտով ճանապարհ դուրս գանք: Ինքը եւ երէցկինը եկան մեզ հետ մինչեւ գիւղից դուրսը, եւ այնտեղից բարեմաղթութիւններով բաժանուեցան մեզանից:

Գիւղը, ուր գտնւում էր տէր հօր տունը, նստած էր լեռների կուրծքի վրայ, եւ չօրէք կողմից, որպէս բնական պարիսպներ, շրջապատել էին նրան սեպաձեւ բլուներ, որով նա ստացել էր շատ ամուր եւ անառիկ դիրք:

— Տեսնո՞ւմ ես այս գիւղը, — ասաց Ասլանը, երբ հեռանում էինք այնտեղից. — նա ունի յիսուն տուն միայն, բայց ամբողջ մի ամիս պատերազմեց աւելի քան 500 քրդերի հետ եւ մնաց դարձեալ անառիկ:

— Որովհետեւ ամուր դիրք ունի, — պատասխանեցի ես:

— Այդ չէ միայն պատճառը, բնակիչները քաջ եւ սրտոտ մարդիկ են:

— Որովհետեւ այնպիսի քահանայ ունեն, որպէս «գիժը»:

— Զարմանալի մարդ է դա, — պատասխանեց Ասլանը: — Դու նրա կատակներին մի՛ նայիր, բաւականին եւ խելք ունի եւ շատ բարեսիրտ է:

Այնուհետեւ Ասլանը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր «գժի» կեանքից, որոնց ամէնի մէջ երեւում էր նա չափազանց յանդուգն եւ մեծասիրտ բնաւորութեամբ, — մի արկածախնդիր մարդ, որ իր ամբողջ կեանքում կռուել էր զանազան դժոարութիւնների դէմ: Նրա ձեռքերը մաքուր չէին մնացել եւ արիւնից. նա շատ անգամ սպանել է, յափշտակել է, աւար եւ գերի է բերել: Շատ անգամ եւս յաղթել է, բոլոր կայքը թշնամուց յափշտակոել է, եւ նրա առաջին կինը եւ որդիքը սրի բերան են ընկել: Մի փոքր նշմարոող խելագարութիւնը այս անցքից յետոյ է պատահել:

— Այսոամենայնիւ, — շարունակեց Ասլանը, — տէր Մեսրոպը ժողովրդից շատ սիրուած մարդ է. մօտ տասն հայոց գիւղեր այս կողմերում գտնւում են նրա հովանաւորութեան ներքոյ: Եւ բոլորը հօր նման պաշտում են նրան: Մի սաստիկ սովի ժամանակ, նա ծախեց ինչ որ ինքն ունէր, եւ ծախել տոեց հարուստներինը, եւ այսպիսով պահպանեց աղքատների կեանքը: Նա իբրեւ քահանայ, թէեւ անյարմար է, բայց իբրեւ կառավարող անձն, ունի շատ արժանաւորութիւններ: Այս պատճառով է, որ կարողացել է իր ձեռքի տակը պահել այս լեռներում գտնուած բոլոր հայոց գիւղորայքը, առանց թոյլ տալու